ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն Սոցիալական մանկավարժություն, 011301.03.6

Որակավորումը Մանկավարժության բակալավր

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա 4-րդ կուրս 1-ին, 2-րդ կիսամյակներ

Հաստատված է

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում

(արձ. թիվ 1, 28.08.2023 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Լ. Բաղդասարյան

Հաստատված է

Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. թիվ 1, 11.09.2023 թ.)

ֆակուլտետի դեկան Հ. Պապոյան

Վանաձոր

2023 թ.

Բովանդակություն

1. Պրակտիկայի նպատակը և խնդիրները

2. Պրակտիկայի տեղը կրթական ծրագրի կառուցվածքում

3. Պրակտիկայի արդյունքները

4. Պրակտիկայի ռեսուրսային ապահովումը

5. Պրակտիկայի ընթացակարգը

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

5.2. Պրակտիկայի գնահատումը

1. Պրակտիկայի նպատակը

Պրակտիկայի առաքելությունը նպատակաուղղված է.

Արտադրական մասնագիտական պրակտիկայի առաքելությունն ինտերակտիվ-նորարարական և զարգացնող կրթական միջավայրի բաղադրիչների ներդրումն է պրակտիկ գործունեության մեջ՝ սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների և մոդելների կիրառման ճանապարհով:

Պրակտիկայի մասնագիտական նպատակն է.

Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները, աջակցել մասնագիտական կոմպետենտության ձևավորմանը, մասնագիտական կայացմանը:

Պրակտիկայի հոգեբանական նպատակն է.

Ուսանողին հստակ պատկերացում տալ ապագա մասնագիտական գործունեության առանձնահատկությունների և այն սոցիալ-հոգեբանական կոմպետենցիաների մասին, որոնք կիրառվում են տարբեր տարիքային խմբերի հետ աշխատանքի ընթացքում:

Պրակտիկայի խնդիրներն են.

- զարգացնել մասնագիտական գործունեությունն արդյունարար պլանավորելու, կազմակերպելու և իրականացնելու հմտությունները,
- նպաստել ուսանողների հետազոտական-վերլուծական հմտությունների զարգացմանը,
- զարգացնել հետաքրքրությունը մասնագիտական գործունեության նկատմամբ,
- նպաստել մասնագիտական խնդիրների լուծման ստեղծագործականության զարգացմանը,
- զարգացնել աշխատանքային գործունեության մոդելավորման և իրականացման ունակությունները,
- նպաստել մասնագիտական գործունեության ախտորոշման, կանխատեսման, մոդելավորման, նախագծման, պլանավորման կարողությունների զարգացմանը,
- ուսանողներին սովորեցնել պրակտիկայի ընթացքում ճիշտ ընտրել և կիրառել հոգեբանական մեթոդներն ու մեթոդիկաները,
- ուսումնասիրել աշակերտների հոգեբանական առանձնահատկությունները, նրանց տարիքային, անհատական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, վարքային, սոցիալական, մտավոր զարգացման խնդիրները,

- պլանավորել հոգեբանամանկավարժական հետազոտության գործընթացը, արտադասարանական աշխատանքները և միջոցառումները,
- վերլուծել հոգեբանամանկավարժական նշանակալի փաստեր, նկարագրել հոգեբանական հասկացություններ, մեթոդներ:

2. Պրակտիկայի տեղը կրթական ծրագրի կառուցվածքում

Սոցիալական մանկավարժություն, 011301.03.6 որակավորման (աստիճան) «Մանկավարժության բակալավր») ուսումնական պրակտիկան կազմում է մասնագիտական կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Պրակտիկայի ընթացքում ուսանողին հնարավորություն է ընձեռնվում իրական դաշտում ներդնելու ուսումնառության ընթացքում «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներ», «Սոցիալ-մանկավարժական աջակցություն», «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն», «Սոցիալ-մանկավարժական հետազոտության մեթոդների պրակտիկում», «Ներառական կրթության կազմակերպում», «Ընդհանուր հոգեբանություն», «Տարիքային հոգեբանություն», «Հատուկ հոգեբանություն», «Հոգեբանամանկավարժական ախտորոշում» առարկաների շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների ուսումնական պրակտիկաների արդյունքում ուսանողները կընդարձակեն պատկերացումները մասնագիտական գործունեության վերաբերյալ, կխորացնեն մասնագիտական գիտելիքները, ընդհանրական և գործնական մասնագիտական կարողությունները, հնարավորություն կունենան տեսական գիտելիքները կիրառել գործնականում, որոնք կնպաստեն կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Կոմպետենցիաների ցանկ,

որոնք «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտությամբ հոգեբանության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի արտադրական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 011301.03.6 «Սոցիալական մանկավարժություն» ԿԾ-ով

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Նկարագրել սոցիալական մանկավարժի իմիջը, դերերը, գործառույթները

Ներկայացնել անձի հոգեկան և սոցիալական զարգացման օրինաչափությունները

Տարբերակել անձի զարգացման նորման շեղումներից

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծմանը նպաստող մեթոդների ընտրության, կիրարկման և արդյունքների գնահատման կարողություն

Սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման և իրականացման կարողություն

Հոգեբանամանկավարժական ախտորոշման, կանխարգելման, շտկման, վերականգնման կարողություններ

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտության արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Տիրապետել ինտելեկտուալ, բարոյական, կոմունիկատիվ և կազմակերպչական կարողություններին

Ունենալ սոցիալական, մշակութային, քաղաքացիական պատասխանատվություն

4. Պրակտիկայի ռեսուրսային ապահովումը

Պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է ապահովված լինեն հիմնական և լրացուցիչ գրականությամբ, որը կօգնի նրանց ներկայացնել հաշվետվություն պրակտիկայի վերաբերյալ:

1. Ազատյան Թ. «Մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների շարժողական և հուզակամային ոլորտի զարգացումը երաժշտության ուղեկցությամբ», Երևան, 2016թ.
2. Մարության Մ. «Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հատուկ խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ», Երևան, 2012թ.
3. Մուրադյան Ս. «Լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտ արտաբերության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական Հանդես, 2013թ.
4. Азатян Т.Ю. «Методы исследования, направленные на определение межполушарной асимметрии нормально развивающихся детей и детей с нарушением умственного развития 8-11 лет», Инклюзия в образовании, 2019

5. Григорьева С.Г. «Социальная педагогика: учебное пособие» / авт.-сост.. – Казань: Казан.ун-т, 2018. – 97 с.

6. Мардахаев, Л.В. «Социальная педагогика: учебник для бакалавров» / Л. В. Мардахаев. — 6-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2016. — 817 с.

Պրակտիկայի համար անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցի ինտերնետ ռեսուրսներ

- https://hmk.am/wp-content/uploads/2020/11/ketery-miacru-irar.pdf
- https://hmk.am/wp-content/uploads/2021/03/%D4%B1%D5%87%D4%BD.-%D5%86%D5%85%D5%88%D5%92%D4%B9-%D5%88%D5%92%D5%90%D4%B1%D4%BD-%D5%80%D4%B1%D5%84%D4%B1%D4%B4%D5%90%D5%88%D5%92%D5%84.pdf
- https://hmk.am/wp-content/uploads/2021/03/%D4%B3%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A5%D5%B6%D6%84-%D5%AE%D5%A1%D5%B2%D5%AB%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8.pdf
- https://hmk.am/wp-content/uploads/2023/01/%D4%B1%D5%86%D5%80%D4%B1%D5%8F%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D5%88%D5%92%D5%8D%D5%88%D5%92%D5%91%D5%84%D4%B1%D5%86_%D5%8A%D4%BC%D4%B1%D5%86.pdf
- https://hmk.am/wp-content/uploads/2023/01/Lyudmila_Gareginyan-Inchpes_sovorecnel_erekhayin_voroshel_zhamy_slaqavor_zhamacuyci_mijocov.pdf

5. Պրակտիկայի ընթացակարգը

Պրակտիկան անց է կացվում հետևյալ բովանդակությամբ.

Ուսանողը ծանոթանում է հաստատությանը, ցուցաբերում է սոցիալ-մանկավարժական և մանկավարժահոգեբանական օգնություն՝ ստեղծելով դրական բարոյահոգեբանական մթնոլորտ: Ուսումնասիրում է խոցելի խմբերում ներառված անձանց տարիքային և անհատական առանձնահատկությունները և տալիս է անձի կամ խմբի հոգեբանամանկավարժական և սոցիալ-մանկավարժական բնութագիրը: Ընթացքում վարում է նաև անհատական դաստիարակչական, հոգեախտորոշիչ և հոգեշտկողական աշխատանքներ: Պրակտիկայի ընթացքում մասնակցում է հաստատությունում անցկացվող միջոցառումներին, տարբեր տեսակի պարապմունքներին: Աշխատում է ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ: Ծանոթանում է

իրեն ամրագրված անձի կամ խմբի հոգեբանամանկավարժական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին: Ուսանող-պրակտիկանտը տալիս է հոգեբանամանկավարժական եզրակացություն, որտեղ նշվում են հոգեկան զարգացման թերությունների, հապաղումների, շեղումների վերացման հնարավոր ուղիները:

	Բովանդակություն
Շաբաթ 1	Ծանոթացում պրակտիկայի ծրագրին, նպատակին, մանկավարժահոգեբանական խնդիրներին, հանձնարարությունների բովանդակությանը, ծանոթացում հաստատության կառուցվածքին, անձնակազմին, հոգեբանի և մանկավարժների գործառույթներին, հաստատության կողմից լուծվող խնդիրների առանձնահատկություններին:
Շաբաթ 2	Իրականացնել սոցիալական, մանկավարժական, հոգեբանական հետազոտություն
Շաբաթ 3	Կազմակերպել մասնագիտական, ինչպես նաև հոգեախտորոշիչ աշխատանքներ, կազմել անհատական, դասարանական խմբի սոցիալական, հոգեբանական բնութագիր
Շաբաթ 4	Կատարել իրականացված աշխատանքների ամփոփում, լրացրած օրագրերի, անհատական բնութագրերի վերլուծություն, քննարկում:

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

Պրակտիկայի ղեկավարները

- ապահովում է պրակտիկայի անցկացման պայմանները,
- անցկացնում է խորհրդատվություն,
- կազմակերպում է ուսանողների աշխատանքը,
- վերահսկում է ուսանողների աշխատանքը, ձեռնարկում է միջոցներ՝ պրակտիկայի կազմակերպման թերությունները վերացնելու ուղղությամբ
- ղեկավարում է պրակտիկայի արդյունքների ամփոփումը,
- գնահատում է ուսանող-պրակտիկանտի աշխատանքը:

Հաստատության աշխատակից ղեկավարը.

- ստեղծում են պայմաններ՝ պրակտիկայի անցկացման համար,
- անցկացնում են խորհրդատվություններ, օգնում են սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծմանը,
- վերահսկում են ուսանողների կողմից պրակտիկայի ծրագրի հոգեբանամանկավարժական բլոկի կատարումը,
- բացատրում են ուսանողներին սոցիալական մանկավարժի մասնագիտական պարտականությունները, տվյալ հաստատության գործունեության առանձնահատկությունները, ծանոթացնում են սոցիալական միկրոմիջավայրին,
- գնահատում են ուսանողի աշխատանքը:

Պրակտիկանտների պարտականություններն ու իրավունքները.

- Պրակտիկան անցկացնում է օրական առնվազն 6 ժամ,
- պահպանում է աշխատանքային կարգապահությունը,
- հետևում է բոլոր նախանշված միջոցառումներին և խորհրդատվություններին,
- մշակում է պրակտիկայի անհատական պլանը, աշխատում է համաձայն հաստատված պլանի, ներկայացնում է հաշվետվություն (գրավոր և բանավոր),
- ներկայացնում է իր առաջարկները՝ պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը

- Պրակտիկայի օրագիր:
- Աշակերտի սոցիալ-մանկավարժական բնութագիր:
- Աշակերտի՝ որպես կոլեկտիվի անդամի անհատական հոգեբանական բնութագիր:
- Դասարանային խմբի հոգեբանական բնութագիր:

5.2. Պրակտիկայի գնահատումը

✓ Պրակտիկայի գնահատականը ուսանողի ընդհանուր առաջադիմության բաղկացուցիչ մասն է և որոշվում է պրակտիկայի մասնագիտական ծրագրում ներկայացված միավորների սանդղակի, պրակտիկայի գնահատման հարցաշարի, չափորոշչի հիման վրա:

✓ Պրակտիկայի գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով, որի բաղադրիչներն են պրակտիկայի ընթացքում կիրառած գիտելիքները, ձեռք բերած

կարողությունները, հմտությունները, կոմպետենցիաները, ինչպես նաև պրակտիկային ուսանողի հաճախումը և պրակտիկայի պաշտպանության մասնակցությունը:

✓ Պրակտիկայից բացակայած ուսանողների հարցը կարգավորվում է համալսարանի ներքին կարգապահական կանոններով:

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները (գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում
1. Հաճախելիություն	0 - 10	
2. Մասնագիտական իմացություն	0 - 20	
3. Կիրառած գործիքակազմ • Մեթոդական գործիքակազմի ընտրության և կիրառման կարողություն • Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդիկաների կիրառման հմտություն	0 - 10 0 - 10	
4. Մանկավարժական աշխատանք • Մանկավարժական աշխատանքի կազմակերպման հմտություններ • Մանկավարժական ինքնիրացման կարողություն • Մանկավարժական մշակույթ	0 - 5 0 - 5 0 - 5	
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • հոգեբանական հետազոտություն կատարելու, հոգեբանական բնութագրի կազմման կարողություն • սեմինարների, հոգեշտկողական աշխատանքների կազմակերպման	0 - 5 0 – 5 0 - 5	

կարողություն • հետազոտության արդյունքների վերլուծության և մեկնաբանման կարողություն		
Պաշտպանություն	0 - 20	
Ընդհանուր միավորը	100	

Արտադրական պրակտիկայի հաճախումների հատկացվող միավորները ըստ ուսանողի մասնակցության աստիճանի

Մասնակցության աստիճանը %	**Հատկացվող միավորը**
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0